

Հաշվետվության նախագիծ

«Հայաստանում կայուն անտառկառավարման չափանիշներ և
ցուցանիշներ»

Ազգային ուսումնական սեմինար

Սեպտեմբերի 13-15-ը, 2017թ.

Երևան, Հայաստան

Կազմակերպվել է ՄԱԿ-Ի ԵՏՀ/ՊԳԿ անտառային տնտեսության և փայտանյութի բաժնի և ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ու ՄԱԿ-ի ԵՏՀ/ՊԳԿ «Կովկասում և Կենտրոնական Ասիայում կայուն անտառկառավարման հաշվետվողականության համակարգ» ծրագրի շրջանակներում ՄԱԶԾ-ի հետ համագործակցությամբ, որը ֆինանսավորվում է ՄԱԿ-ի Զարգացման հիմնադրամի միջոցով:

Ոչ պաշտոնական թարգմանություն

Սեմինարի վերաբերյալ հաշվետվությունը պատրաստվել է
Ազգային խորհրդատու Արմեն Գևորգյանի կողմից

Հոկտեմբեր, 2017թ.

Բովանդակություն

Հապավումների ցանկ	2
1.1 Հայաստանի անտառային ռեսուրսները.....	5
1.2 Անտառկառավարումը Հայաստանի Հանրապետությունում	6
1.3 Ռազմավարական շրջանակ	6
1.4 Բնապահպանական և սոցիալ-տնտեսական խնդիրներ.....	7
2. Հայստանում կայուն անտառկառավարման Ց&Չ հետ կապված գործընթացների հակիրճ ներկայացում	8
2.1 Անտառային քաղաքականության բացեր.....	9
2.2 Անտառկառավարման պլաննավորում և դրան առնչվող մարտահրավերներ.....	10
2.3 ԿԱԿ ազգային չափանիշների և ցուցանիշների մշակմանն ուղղված նախաձեռնություններ.....	11
2.4 Տարածաշրջանային նախորդ մեկնարկային սեմինարը Երևանում	11
3. Ազգային ուսումնական սեմինար	12
3.1 Սեմինարի 1-ին օր, 13-ը սեպտեմբերի – Նախապատրաստական աշխատանքներ, նպատակներ, ԿԱԿ Ց&Չ նախադրյալներ և իրավիճակի ընդհանուր բնութագիր	13
3.2. Սեմինարի 2-րդ օր, 14-ը սեպտեմբերի – Ց&Չ գործնական հմտությունների զարգացում.....	20
3.3 Սեմինարի 3-րդ օր, 15-ը սեպտեմբերի 2017թ. – Ազգային Ց&Չ մշակում	26
Բոլոր ցուցանիշների անհատական գնահատում.....	26
4. Ամփոփում և հաջորդ քայլեր (սահմանված կարիքներ և գործողություններ, սեմինարի գնահատում, փակման խոսք)	41
Հավելված 1 - մասնակիցների ցանկ	46
Հավելված 2: Սեմինարի օրակարգ, 13 - 15 սեպտեմբերի, 2017թ., Երևան.....	49
Հավելված 3: «Հայանտառ» ՊՈԱԿ (մասնաճյուղեր -անտառտնտեսություններ).....	51

\

Հապավումների ցանկ

ԱԱԾ	Անտառի ազգային ծրագիր
ԱԿՊ	Անտառկառավարման պլաններ
ԱՊՄԿ	«Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ԲԲՆԱ	Բարձր բնապահպանական նշանակության անտառներ
ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածքներ
ԳԱ	Գիտությունների Ակադեմիա
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամ
ՀՀԱՎԾ	Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն
ԿԲԿ	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա
Ց&Ձ	Չափանիշներ և ցուցանիշներ
ՊԳԿ	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը
ՏԻԿ	Տեղական ինքնակառավարում
ՀՀԳՆ	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
ՀՀԲՆ	ՀՀ Բնապահպանության նախարարություն
ՀՀ ՏԿԶՆ	ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՈԲԱԱ	Ոչ բնափայտային անտառային արտադրանք
ՊՏ-ներ	Պահպանվող տարածքներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԿԱԿ	Կայուն անտառկառավարում
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԱԿ-Ի ԵՏՀ	Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողով
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

1. Նախաբան

Սույն զեկույցում ներկայացված են ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի/ՊԳԿ-ի, ՄԱԿ-ի Զարգացման հիմնադրամի կողմից «Հայաստանում կայուն անտառկառավարման չափանիշները և ցուցանիշները» խորագրով կազմակերպված ազգային ուսումնական սեմինարի արդյունքները, որը տեղի է ունեցել Երևանում՝ 2017 թվականի սեպտեմբերի 13-15-ը:

Ուսումնական սեմինարն իրականացվել է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ), ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) և ՄԱԿ-ի Զարգացման հիմնադրամի (ԶՀ) ծրագրի շրջանակներում: Այն նախագծվել է Կովկասի և Կենտրոնական Ասիայի հինգ երկրների (Հայաստան, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան և Ուզբեկստան) կայուն անտառկառավարման (ԿԱԿ) ազգային չափորոշիչների և ցուցանիշների (Չ&Ց) մշակմանն ուղղված ազգային հզորությունների ամրապնդման նպատակով:

Ծրագրի հիմքում ընկած են կոնկրետ կարիքներին ու առաջնահերթություններին ուղղված գործընթացներն ու փորձագիտական գիտելիքները, որոնք հասանելի են մասնակից երկրներում: Ծրագրի տևողությունը 2016 թ. Հունիսից մինչև 2019 թ. ընկած ժամանակահատվածն է: Ծրագիրը աջակցում է Հայաստանին՝ օժանդակելով շահագրգիռ բազմակողմ մասնակցային ներգրավման գործընթացին և միջազգային ու ազգային փորձագետների մասնակցությամբ հաշվետվողականության համակարգերի զարգացմանը նվիրված սեմինարների անցկացման միջոցով:

Նախաձեռնությանն աջակցում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՊՈԱԿ), որն առնչվում է հասարակության լայն զանգվածների հետ, ինչը կարևոր է անտառների վերաբերյալ առավել ընդգրկուն որոշումների կայացման տեսանկյունից:

Սեմինարին մասնակցել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության, Պետական վիճակագրական ծառայության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, «Անտառային պետական մոնիտորինգ» ՊՈԱԿ-ի, ուսումնական հաստատությունների, մարզպետարանի, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունների 35-ից ավելի փորձագետներ (հավելված 1): Հայաստանում կայուն անտառկառավարման չափորոշիչների և ցուցանիշների հետագա աշխատանքների վերաբերյալ առաջարկությունների քննարկման և ձևակերպման նպատակով Սեմինարին մասնակցել են փորձագետներ Հայաստանից, Էստոնիայից և Վրաստանից:

Ուսումնական սեմինարի նպատակները (Հավելված 2: Սեմինարի օրակարգ) հետևյալներն էին.

- բացահայտել ազգային և միջազգային անտառային հաշվետվողականության կարգավիճակը,
- վերլուծել չափանիշների և ցուցանիշների (Չ&Ց) մշակման կարիքները, օգուտները և ներուժը,

- քննարկել և ընտրել ազգային Չ&Ց նախնական տարբերակները,
- գնահատել գործընթացի պլանավորումը և դրա իրականացման լավագույն մոտեցումը:

Մեմինարն իրականացվել է անգլերեն և հայերեն (թարգմանությամբ) լեզուներով: Այն կազմակերպվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ: Մասնակից փորձագետները երեք օր աշխատել են՝ ներկայացրել տարբեր զեկուցումներ և կատարել խմբային վարժություններ: Մեմինարը վարել է Վարդան Մելիքյանը:

Մեմինարի մասին մանրամասն տեղեկությունները (ծրագիր, շնորհանդեսներ, մամլո հաղորդագրություն, լուսանկարներ) հասանելի են հետևյալ կայքում՝ <https://www.unece.org/index.php?id=43759#/>:

Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ հղմամբ. <http://www.unece.org/forests/areas-of-work/capacity-building/unda2016-2019.html>:

1.1 Հայաստանի անտառային ռեսուրսները

Անտառներն ունեն կարևոր հակաէրոզիոն, հողապաշտպան, ջրակարգավորիչ և կլիմայակարգավորիչ գործառույթներ: Մինչդեռ այս էկոլոգիական գործառույթները լայնորեն ճանաչված են, Հայաստանում անտառների տնտեսական և սոցիալական գործառույթները թերագնահանահոված են:

ՀՀ պետական անտառային կառույցի՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տվյալներով, 2010 թ. դրությամբ անտառածածկը կազմել է 345,820 հա, ինչը կազմում է ընդհանուր տարածքի մոտ 11,2% -ը (նույն ցուցանիշը գրանցվել է 1993 թ.-ին):

Հայաստանի անտառային ռեսուրսները խիստ սահմանափակ են, ինչը անտառներն առավել խոցելի է դարձնում գերշահագործման/գերմթերման տեսանկյունից: Հայաստանի լեռնային անտառները կենսական դեր ունեն հազվագյուտ և վտանգված կենդանատեսակների ապրելավայրերի ապահովման գործում:

Անտառային համակեցությունների թիվը անցնում է 200-ից, անտառային տարածքներում հանդիպում են 274 տեսակի ծառեր և թփեր, որոնցից բնական անտառկազմող հիմնական տեսակներն են արևելյան հաճարենին (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Q. iberica*), արևելյան կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*) և սոճին (*Pinus Sosnovski*, *Pinus kochiana*): Տարբեր բնական և մարդածին ազդեցությունների հետևանքով կաղնու, հաճարենու և սոճու արժեքավոր անտառային տեսակների բնական վերականգնումը բավարար չէ և դիտարկվում է *Taxus baccata*, *Corylus colurna* և այլ հազվագյուտ ծառատեսակների գերակշռությամբ ծառուտների կտրուկ նվազման միտում. ներկայումս դրանք հանդիպում են կղզյակների և առանձին ծառերի տեսքով:

Ընդունված է, որ երկրի տարածքի մոտ 30 տոկոսն ի սկզբանե պատված է եղել անտառներով: Ներկայումս, Հայաստանում անտառները հավասարաչափ չեն բաշխված. անտառածածկի 62 տոկոսը գտնվում է հյուսիսում և հյուսիս-արևելքում (Լոռիի և

Տավուշի մարզեր), իսկ 36 տոկոսը՝ հարավում (Սյունիքի մարզ), մինչդեռ երկրի կենտրոնական հատվածը գրեթե անտառազուրկ է (2 տոկոս): Բոլոր անտառները հանդիսանում են պետության սեփականությունը:

1.2 Անտառկառավարումը Հայաստանի Հանրապետությունում

ՀՀ պետական անտառները հիմնականում կառավարվում են ՀՀ գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների կողմից՝ ներառյալ բնության հատուկ պահպանվող անտառային տարածքների /ԲՀՊՏ/ համակարգը, որը հիմնականում ընդգրկում է անտառային լանդշաֆտները և հանրապետության ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60-70%-ը: Ներկայումս իրականացվում են տարածքների սահմանների և կարգավիճակի հստակեցման աշխատանքներ համայնքների վարչական սահմաններում գտնվող անտառների մի մասում (նախկին կոլխոզ-սովխոզային անտառներ):

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հանդիսանում է անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրման և օգտագործման բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը: Անտառային տարածքների շուրջ 75% -ը՝ ներառյալ 27 արգելավայրերից 13-ը կառավարվում են «Հայանտառ»-ի (ՊՈԱԿ) և դրա տարածքային 19 մասնաճյուղերի միջոցով (Հավելված 3: «Հայանտառ» ՊՈԱԿ), որոնք գտնվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության ենթակայության ներքո:

Անտառների պետական վերահսկողությունը վերապահված է ՀՀ Բնապահպանության նախարարությանը, որն իրականացվում է բնապահպանական պետական տեսչության կողմից: Անտառային տարածքների շուրջ 25% - ը՝ բնության հատուկ պահպանվող տարածքների /«Դիլիջան» և «Սևան» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» պետական արգելոց, Զանգեզուր կենսոլորտային համալիր՝ ներառյալ «Արևիկ» ազգային պարկ և «Շիկահող» պետական արգելոց և 7 պետական արգելավայրեր/ կազմում, կառավարվում են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Կենսառեսուրսների կառավարման գործակալության և դրա ենթակայությամբ գործող համապատասխան ՊՈԱԿ - ների միջոցով, որոնք բոլորն էլ գտնվում են ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության ներքո:

1.3 Ռազմավարական շրջանակ

Վերջին շրջանում ՀՀ անտառային ոլորտում մշակվել են մի շարք հիմնարար փաստաթղթեր, ներառյալ՝ Անտառի ազգային քաղաքականության և ռազմավարության փաստաթուղթը /2004 թ./, Անտառի ազգային ծրագիրը /2005թ./, Ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիրը /2005 թ./, Անտառային պետական մոնիտորինգի իրականացման ծրագիրը /2006 թ./ ինչպես նաև մի շարք ենթաօրենսդրական ակտեր և այլ փաստաթղթեր:

Հայաստանի անտառների հետ կապված հիմնական ռազմավարական և իրավական փաստաթղթերը ներառում են հետևյալ փաստաթղթերը.

- ՀՀ անտառի ազգային քաղաքականություն և ռազմավարություն (ընդունվել է 2004թ.);
- ՀՀ անտառի ազգային ծրագիր 2005-2015թթ. համար (ընդունվել է 2005թ.);
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005 թ.)՝ մի շարք փոփոխված և/կամ ավելի ուշ ընդունված նորմատիվ իրավական ակտերի հետ միասին;
- Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարություն և գործողությունների պետական ծրագիր (2015թ.);
- Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարություն, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիր (2014թ.);
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք (2006), որի վերանայված տարբերակը հաստատման գործընթացում է:

1.4 Բնապահպանական և սոցիալ-տնտեսական խնդիրներ

Հայաստանում անտառները առավել վտանգված էկոհամակարգերի շարքում են: Անտառների գերշահագործման, չկարգավորված անտառահատումների, արածեցման, խոտհունձի, հողազավթումների և այլ պատճառներով դիտվում է արժեքավոր անտառտարածքների կորուստ: Անտառներում տեղի են ունենում տեսակային կազմի և կառուցվածքային փոփոխություններ, ծառուտները կորցնում են բնական վերականգնման ունակությունը և իջնում է դրանց արտադրողականությունը:

Անտառների առանձին զանգվածների ոչնչացման հետևանքով խախտվում է շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը: Հատված տեղամասերում և դրանց հարող տարածքներում դիտվում են հողատարման, ձորակառաջացման, սողանքների ակտիվացման, աղբյուրների չորացման և այլ երևույթներ: Ավելացել է էրոզիոն-սելավային պրոցեսների ինտենսիվությունը, որոնք մեծ վնաս են հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին: Անտառային էկոհամակարգերի գերշահագործման և արածեցման արդյունքում բարձրարժեք ծառատեսակներին հաճախ փոխարինում են տափաստանամարգագետնային բուսական տիպերը:

Անտառածածկ տարածքների կրճատումը հանգեցնում է բուսական և կենդանական պոպուլյացիաների արեալների մասնատմանը և գենետիկական բազմազանության կորստին, մթնոլորտում ածխաթթու գազի ավելացմանը, նվազում է անտառի մթնոլորտից ածխածնի երկօքսիդի կլանման և կուտակման կարողությունը: Անտառային էկոհամակարգերի անկայունությունը ազդում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, խոտհարքերի ու արոտավայրերի բուսական կազմի բազմազանության վրա:

Սոցիալ-տնտեսական տարբեր պատճառների և փայտանյութի բարձր պահանջարկի հետևանքով անտառհատումները դեռևս գերազանցում են բնափայտի օրինական հատումների ծավալները: Դրան նպաստում են փայտանյութի մատչելիությունը, էներգետիկ ռեսուրսների թանկությունը, բնակչության սոցիալապես անապահով խավերի կարիքներն ու ցածր վճարունակությունը: Փայտանյութը շարունակում է մնալ անտառամերձ տարածքների բնակչության վառելիքի հիմնական աղբյուրը, հստակորեն չեն կանոնակարգվում անտառային խոտաբույսերի և հատապտուղների հավաքը, խոտհունձը և արածեցումը:

Ապօրինի անտառհատումների կանխարգելման խնդրում որոշ դրական ազդեցություն է ունեցել անտառամերձ համայնքների ընտանիքներին տարեկան ՑԽՄ թափուկ բնափայտի անվճար տրամադրման ՀՀ կառավարության որոշումը, սակայն անհրաժեշտ է վերանայել փոխադրամիջոցների տրամադրման, հատատեղերի հեռավորության և գործընթացի կազմակերպման հետ կապված այլ տեխնիկական հարցերը:

2. Հայաստանում կայուն անտառկառավարման Ց&Չ հետ կապված գործընթացների հակիրճ ներկայացում

Վերջին տարիներին Հայաստանում իրականացվել են անտառային ոլորտին առնչվող որոշ գործողություններ, ներառյալ՝ կենսաբազմազանության, ԲԲՆԱ-րի և կլիմայի փոփոխությանն առնչվող խնդիրները, ինչպես նաև անտառկառավարման տեղեկատվական համակարգերի ներդրումը, անտառկառավարման պլանավորման և մոնիտորինգի բարելավումը: Թեպետ այս գործողությունները հանդիսանում են կարևոր մեկնարկային քայլեր, այնուամենայնիվ դրանց իրականացումը անբավարար է:

Վերջին շրջանում մշակվել են ՀՀ անտառային ոլորտին առնչվող մի շարք հիմնարար փաստաթղթեր՝ Անտառի ազգային քաղաքականության և ռազմավարության փաստաթուղթը /2004 թ./, Անտառի ազգային ծրագիրը /2005թ./, Ապօրինի անտառհատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիրը /2005 թ./, Անտառային պետական մոնիտորինգի իրականացման ծրագիրը /2006 թ./, ենթաօրենսդրական ակտերի որոշ մասը և այլ փաստաթղթեր:

ՀՀ անտառի ազգային քաղաքականությունը միտված է ապահովելու անտառների և անտառային տարածքների կայուն կառավարումը: ՀՀ անտառի ազգային քաղաքականությունն ամրագրում է, որ անտառները հանդիսանում են ազգային հարստություն և պետք է ծառայեն նաև ապագա սերունդներին՝ ապահովելով անտառների և անտառային տարածքների կայուն կառավարումը:

Անտառի ազգային ծրագրի հիմնական նպատակն է՝ անտառային էկոհամակարգերի պահպանությունը, դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնումը, անտառային պաշարների շարունակական և արդյունավետ օգտագործումը և անտառների կայուն կառավարման քաղաքականության իրականացումը: Ծրագրի

կարևոր խնդիրներից են ապօրինի անտառահատումների նվազեցման ու կանխարգելման, դրանց տնտեսական և սոցիալական նախադրյալների վերացման ու շրջակա միջավայրի բարելավման, կառուցվածքային, գիտակրթական և կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումները:

2.1 Անտառային քաղաքականության բացերը

Անտառային ոլորտի պետական քաղաքականությունը հասցեագրված չէ բազմանպատակ անտառօգտագործման և կառավարման էկոհամակարգային մոտեցումների ապահովմանը: Էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայությունները չեն դիտարկվում որպես տնտեսավարման այլընտրանքային ուղղություններ, չկան դրանց գնահատման կամ տրամադրման, ֆինանսական հոսքերի ստեղծման վերաբերյալ ընդունված և իրականացված ծրագրեր: Անտառային ոլորտի քաղաքականության և օրենսդրական փաստաթղթերում ԷԾ-րի վերաբերյալ դրույթները կամ կանոնակարգող փաստաթղթերը բացակայում են:

Ոլորտի զարգացումները չեն բավարարում միջազգային պահանջները /կոնվենցիաներ և ուղեցույցեր/, մասնավորապես ԿԱԿ չափանիշների կիրարկման, բազմանպատակ անտառօգտագործման, Ազգային օրենսդրության վերանայման, բնական ապրելավայրերի պահպանության նպատակով հողօգտագործման սխեմաների և տարածական պլանավորման գործիքների կիրառման, որոշումների կայացման գործընթացում տեղական բնակչության ընդգրկման և այլ հարցերում (Այիչիի նպատակային խնդիրներ, ԿԲԿ ռազմավարական պլան 2011-2020թթ.):

Թույլ ֆինանսական, մարդկային և տեխնիկական հնարավորությունների արդյունքում ԱԱԾ-ում ուրվագծված մի շարք միջոցառումներ դեռևս չեն իրականացվել: Հայաստանում կայուն անտառկառավարմանն ուղղված գործողությունները պատշաճ կերպով նախաձեռնված չեն, իսկ անտառային էկոհամակարգերի սոցիալ-էկոլոգիական գործառույթները թերագնահատվել են: Անբավարար են նաև կենսաբազմազանության վերաբերյալ հետազոտությունները, Բարձր բնապահպանական նշանակության անտառների ճանաչման, անտառկառավարման պլաններում էկոհամակարգային ծառայությունների և կլիմայի փոփոխության հարցերի ընդգրկման փորձը, ինչպես նաև անտառշինության վերաբերյալ հանրային տեղեկատվությունն ու ԱԿՊ-ների տվյալները:

ՀՀ անտառի ազգային քաղաքականության և ռազմավարության, ինչպես նաև Անտառի ազգային ծրագրի (2005 թ.) ընդունումից ի վեր, անտառների վերաբերյալ ազգային և միջազգային մակարդակներում կատարվել են որոշակի փոփոխություններ և զարգացումներ: Գոյություն ունի առանցքային ազգային շրջանակային փաստաթղթերի վերանայման հստակ անհրաժեշտություն, որը թույլ կտա անտառային ոլորտում հետագա համակարգված գործունեության համար ընդհանուր հիմք ունենալ:

2.2 Անտառկառավարման պլանավորում և մարտահրավերներ

Անտառտնտեսությունների աշխատանքների պլանավորումը սահմանվում է դրանց կառավարման պլաններում, սակայն ոչ բոլոր անտառտնտեսությունների համար կան մշակված անտառկառավարման պլաններ: Կառավարման պլաններում 10 տարվա կտրվածքով սահմանվում են անտառկառավարման միջոցառումներ: Չնայած անտառկառավարման պլանների մեծամասնությունը հաստատվել է 2010թ.-ին և կիրառվելու է մինչև 2020թ.-ը (դրանք մշակվել են 2006-2008թթ.)՝ դրանք պատրաստվել են 2008թ. հավաքագրված տվյալների հիման վրա, որը կրճատել է դրանց կիրառելիության ժամկետը մինչև 2018թ.-ը: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 19 մասնաճյուղերից 3 անտառտնտեսություն ընդհանրապես չունեն կառավարման պլաններ (իսկ «Իջևանի անտառտնտեսության» և «Սևքար անտառտնտեսության» մասնաճյուղերի կառավարման պլանների ժամկետը լրացել է 2016 թվականին):

ԿՊ-ները ուղղված չեն բազմանպատակ անտառօգտագործմանը, և ոչ բնափայտային անտառային պաշարների օգտագործումը տեղական բնակչության կողմից ընթանում է տարերայնորեն, դրանց վերաբերյալ ամբողջական հստակ գնահատականներն ու պլանավորված միջոցառումները թույլ են արտահայտված (բացառությամբ անտառային կողմնարդյունքի օգտագործումը):

Մինչև այժմ մշակված ԿՊ-ներում առանձնացված չեն Բարձրաթեք Կենսաբազմազանությամբ /Բարձր բնապահպանական նշանակության անտառներ/ անտառտարածքները, էկոբոսաշրջության և տարածքների գործառնական գոտիավորման վերաբերյալ հատուկ միջոցառումներ մշակված չեն: Չկան պլանավորված ծրագրեր կենդանատեսակների միգրացիայի ապահովման, կենսապաշարների հաշվառման ու օգտագործման ենթակա չափաքանակների որոշման և որսատնտեսությունների կազմակերպման, ինչպես նաև անտառային կողմնարդյունքի կայուն օգտագործման վերաբերյալ:

ԿՊ-ներում սահմանված չեն էկոհամակարգերի ամբողջականության և էկոլոգիական գործընթացների ապահովման ինտեգրված միջոցառումները և էկոհամակարգային ծառայությունները, չեն ներկայացվում բնական պաշարների /ոչ բնափայտային/ և կենսաբազմազանության օգտագործման հստակ չափաքանակները: Անբավարար մակարդակի վրա են կենսաբազմազանության մոնիտորինգի և անտառագիտական հատուկ ուսումնասիրությունները: Չկան բավարար տվյալներ անտառների հաշվառման, ընթացիկ փոփոխությունների, հիվանդությունների և վնասատուների, հրդեհների կառավարման, կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցությունների և այլ դիտարկումների վերաբերյալ:

Համակարգված չէ պետական և ոչ պետական դերակատարների և բնակչության համագործակցությունը: Անբավարար են ներկայացված ԱԿՊ տվյալները՝ պլանավորման և որոշումների կայացման գործընթացներին աջակցելու նպատակով:

2.3 ԿԱԿ ազգային չափանիշների և ցուցանիշների մշակմանն ուղղված նախաձեռնություններ

Մեծ թվով երկրներ արդեն իսկ մշակել և սկսել են կիրառել կայուն անտառկառավարման համար ազգային չափորոշիչներ և ցուցանիշներ: Հայաստանը նույնպես մշակում է սեփական չափորոշիչները և ցուցանիշները: Վերջին տարիներին Հայաստանում իրականացվել են կենսաբազմազանության, Բարձր բնապահպանական նշանակության անտառների, Էկոհամակարգային ծառայությունների և կլիմայի փոփոխության հարցերին, ինչպես նաև անտառկառավարման տեղեկատվական համակարգերի ներդրմանը, անտառկառավարման պլանավորմանը և անտառային մոնիտորինգի կատարելագործմանն ուղղված որոշ աշխատանքներ:

Ներկայումս «Հողերի և անտառի կայուն կառավարման ներդրումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում» ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի շրջանակներում իրականացվում է Լոռու և Տավուշի մարզերի 10 անտառտնտեսությունների անտառկառավարման պլանների վերանայման աշխատանքներ: Ի թիվս այլոց, այս աշխատանքում կարևորվում են կենսաբազմազանության խնդիրները և Բարձր բնապահպանական նշանակության անտառները:

Գերմանական միջազգային համագործակցություն ընկերության (ԳՄՀԸ) Կենսաբազմազանության Ինտեգրված Կառավարում (ԿԻԿ) ծրագրի գործունեությունն ուղղված է կայուն կառավարման նպատակով կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը ազգային քաղաքականության/ ռազմավարության մեջ և գործնականում կիրառելուն: ԿԻԿ ցուցանիշներից մեկը Հայաստանի փորձնական անտառտնտեսություններում ԿԱԿ ազգային սկզբունքների վրա հիմնված կայուն կառավարումն է:

2.4 Տարածաշրջանային նախորդ մեկնարկային սեմինարը Երևանում

(«Կովկասում և Կենտրոնական Ասիայում կայուն անտառկառավարման չափանիշները և ցուցանիշները», Երևան, Հայաստան, 2016 թվականի նոյեմբերի 15-18-ը)


Սեմինարի մասնակիցները կարևորել են այն փաստը, որ անտառները Հայաստանում առավել վտանգված էկոհամակարգերից են, իսկ դեգրադացիայի տեմպերը հետզհետե արագանում են: Կայուն անտառկառավարումը Հայաստանի կողմից ստանձնած հանձնառությունների շարքում է և եռօրյա սեմինարն օգնել է անդրադառնալ այդ խնդիրներին:

Երևանում տեղի ունեցած տարածաշրջանային մեկնարկային սեմինարի ընթացքում բացահայտվեցել են Հայաստանում առկա հետևյալ հիմնական բացերն ու մարտահրավերները.

Հայաստանում անտառի գույքագրումը թերի է և վերջին անգամ կատարվել է 1993 թ.-ին /բացահայտվել է Հայաստանի վերաբերյալ վերլուծության առաջադրանքի արդյունքում/:

Նշվել է նաև, որ անտառային մասնավոր հատվածի վերաբերյալ վիճակագրական տվյալները կարող են պակաս ճշգրիտ լինել պետական անտառային կառույցների համեմատությամբ: Անտառային տարածքները կառավարվում են երկու պետական մարմինների՝ գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների կողմից:

Օրենսդրության գործնական կիրարկումը չի ապահովված ապօրինի անտառահատումների մասով: Քանի որ սահմանվել են Հայաստանում կայուն անտառկառավարման կարևորագույն բացերը և հաջողությամբ ամրագրվել են ապագա նպատակներն ու խոչընդոտները, ենթադրվել է, որ երկիրը ծրագրի 3 տարիների ընթացքում առաջընթաց գրանցելու մեծ ներուժ ունի:

<p>Հայաստան</p>  <p>Անտառայի տարաք: 332.001 հա</p> <p>Պաշար: 40.67 (մլն մ³)</p>	<p><u>Անտառկառավարման ներկա իրավիճակ</u></p> <ul style="list-style-type: none"> • Փայտանյութի մթերումից և վաճառքից եկամուտի ստացում • Որս • 100% պետական սեփականություն <p><u>Անտառկառավարման ապագա իրավիճակ</u></p> <ul style="list-style-type: none"> • Փայտանյութի մթերումից և վաճառքից եկամուտների բարձրացում, ինչպես նաև ոչ բնապայտային արտադրանքի և էկոտուրիզմի մարքեթինգ • Կենսաբազմազանության և պաշտպանված անտառային տարածքների ավելացում • CO2 կլանման մակարդակի բարձրացում • Անտառի մոնիտորինգի և վերապատրաստման խթանում • Բարձր մակարդակի կրթության ապահովում անտառտնտեսության աշխատակիցների համար • Անտառում սահիտարական աշխատանքների իրականացում <p><u>Խոչընդոտներ</u></p> <ul style="list-style-type: none"> • Կլիմայի փոփոխություն, անտառի առողջություն • Գործողությունների իրականացման համար անհրաժեշտ անտառային մոնիտորինգի բացակայություն • Ֆինանսավորման բացակայություն, բյուրոկրատիա • Հատման լիցենզիաներ, ապօրինի ծառահատում
---	--

3. Ազգային ուսումնական սեմինար

Հաջորդ գլուխներում կներկայացվեն «Կովկասում և Կենտրոնական Ասիայում կայուն անտառկառավարման չափանիշները և ցուցանիշները» թեմայի վերաբերյալ ներկայացված զեկույցները, աշխատանքային խմբերի կողմից կատարված վարժությունները, ինչպես նաև ազգային ուսումնական սեմինարի արդյունքները (<https://www.ՄԱԿ-ի ԵՏՀ.org/index.php?id=45759#/>):

3.1. Սեմինարի 1-ին օր, 13-ը սեպտեմբերի – Նախապատրաստական աշխատանքներ, նպատակներ, ԿԱԿ Ց&Չ նախադրյալներ և իրավիճակի ընդհանուր բնութագիր

Հյուրընկալող երկրի և ՄԱԿ-ի ԵՏՀ / ՊԳԿ ներկայացուցիչների ողջույնի և բացման խոսք Հանդիպման առավոտյան նիստի ընթացքում բացման խոսքը ներկայացրեցին հյուրընկալող երկրի ներկայացուցիչ Ռուբեն Պետրոսյանը և ՄԱԿ-ի ԵՏՀ/ՊԳԿ ներկայացուցիչ Ալիսյա Կասպրզակը, որին հաջորդեց ՄԱԿի ԵՏՀ/ ՊԳԿ ներկայացուցիչ Թերեզա Լոեֆֆերը՝ ծրագրի հակրիճ ներկայացմամբ: Նրա կողմից ներկայացվեց ծրագիրը, ժամանակացույցը, բյուջեն, Ց&Չ գործընթացների օրինակներ, ազգային Ց&Չ մշակման համար նյութեր և այլն:

Մասնակիցների ներկայացում, սեմինարի նպատակներ, բացահայտված կարիքների գնահատում և կանոններ ու նորմեր: Վերապատրաստման ուղեցույցների ներկայացում (զեկուցում՝ Վարդան Մելիքյան)

Վարդան Մելիքյանն (սեմինարի համակարգող/մոդերատոր) իր զեկուցման շրջանակներում ներկայացրեց սեմինարի ընդհանուր և կոնկրետ նպատակները, մեթոդաբանությունը և ընդհանուր կանոնները: Նա առաջարկեց մասնակիցների ներկայացման մեթոդ (երկու հոգի միմյանց ներկայացնեն), ինչպես նաև ուսումնական սեմինարի կանոնները, նորմերը և ուղեցույցները: Նրա կողմից տրամադրվեցին Հայաստանում 2016թ. նոյեմբերին տեղի ունեցած տարածաշրջանային սեմինարից քաղված հիմնական դասերն ու դրա շրջանակներում ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև Հայաստանում ազգային մակարդակի Ց&Չ մշակման գործընթացի ծրագիրը (տես գլուխ 2.4): Ձեկուցման ավարտից հետո իրականացվեց Հայաստանում կայուն անտառկառավարման կարիքների և առաջնահերթությունների գնահատում:

ԿԱԿ նախադրյալների, սահմանումների, նպատակի, գործընթացների, օգուտների և մարտահրավերների ներկայացում (զեկուցում՝ Մատի Վալգեպեա)

Էստոնիայի շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչ պրն. Մատի Վալգեպեան ներկայացրեց Էստոնիայում կայուն անտառկառավարման Ց&Չ պատմական և ներկա նախադրյալները, հիմքերը, սահմանումները, նպատակը, գործընթացները, օգուտներն ու մարտահրավերները: Նա նաև ներկայացրեց որակական և քանակական ցուցանիշների փոխլրացումը, դրանց առանձնահատկությունները և ստուգման միջոցները, տվյալների հոսքի բուրգը, ինչպես նաև Ց&Չ օրինակներ: Կարևորվեց, որ լավագույն ցուցանիշները պետք է լինեն Կոնկրետ, Չափելի, Մատչելի, Իրատեսական և Ժամկետային (SMART):

Հայաստանի անտառային ոլորտի, անտառային տեղեկատվական համակարգերի, տվյալների մատչելիության և բացերի ներակայացում (զեկուցում՝ Ռուբեն Պետրոսյան)

Ծրագրի հայաստանյան համակարգող, պրն. Ռուբեն Պետրոսյանը (գլխավոր անտառապետ, ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի առաջին փոխտնօրեն) ներկայացրեց Հայաստանի անտառային ոլորտի ներկա վիճակը, ֆինանսավորման և անտառվերականգնման դինամիկան, ինչպես նաև անտառային տվյալները, տեղեկատվության հասանելիությունը և ոլորտի բացերը: Նշվեց, որ

ներկայումս անտառային ոլորտում տեղի են ունենում ինստիտուցիոնալ զարգացումներ և բարեփոխումներ, որոնք նպատակ ունեն բարձրացնել Հայաստանի կարգավիճակը: Տեղեկատվության մատչելիության առնչությամբ նշվեց, որ GIZ - ն աջակցում է անտառների կառավարման ազգային տեղեկատվական համակարգի ստեղծմանը, որը ներկայումս գտնվում է զարգացման փուլում: Ռ.Պետրոսյանը կարևորեց նաև Հայաստանում ԿԱԿ ազգային չափորոշիչների և ցուցանիշների հնարավոր օգուտները, ինչպես նաև խոսեց վերջին ժամանակներում տեղի ունեցած անտառային հրդեհների մասին՝ նշելով, որ 2017 թվականին ավելի շատ անտառ է այրվել, քան նախորդ տասը տարիների ընթացքում միասին վերցրած: Նա առաջարկեց ստեղծել հակահրդեհային խմբեր, ինչպես նաև ներկայացրեց ԱԿ պլանավորման և անտառվերականգնման աշխատանքների կատարելագործման հետագա քայլերը:

Վրաստանում ԿԱԿ Ց&Չ մշակման և կիրառման փորձ (զեկուցում՝ Գիզիա Ալեքսիձե)

Վրաստանում ծրագրի ազգային համակարգող Գիզիա Ալեքսիձեն ներկայացրեց կայուն անտառկառավարման գործիքների ու ցուցանիշների կիրառման իրենց փորձը: Նա ներկայացրեց Վրաստանի ազգային անտառային հայեցակարգի նպատակները և առաջնահերթությունները և «անտառային մոնիտորինգի գլոբալ ցանցի» (GFW) համակարգի և ԱՀՕՏՈԿՊ (Անտառին և հողօգտագործման վերաբերյալ տեղեկատվության և որոշումների կայացման աջակցություն էլեկտրոնային պորտալ/Ատլաս) ինստիտուցիոնալ կարգավորման միջոցով կայուն անտառկառավարման Ց&Չ կիրառման պլանավորման ու ներկայացման հաջորդ քայլերը:

Հայաստանի անտառային ոլորտի խնդիրներ և կայուն անտառկառավարման հայեցակարգ (զեկուցում՝ Գագիկ Ամիրյան)

Գագիկ Ամիրյանը («Հայկական կանաչ խաչ» բնապահպանական հասարակական կազմակերպության տնօրեն) ներկայացրեց Հայաստանի անտառային ոլորտի հիմնական խնդիրները՝ կարևորելով անտառային տարածքների կրճատումը և բնորոշ լանդշաֆտների կորուստը, տեսակների քանակի և դրանց պաշարների կրճատումը, անտառների կողմից ածխածնի կլանման և պաշտպանիչ ֆունկցիայի կրճատումը և այլն:

Առանձնահատուկ շեշտադրվեց արագաճ անտառային տնկարկների խնդիրը, որը թույլ կտա համատեղել կենսաբազմազանության պահպանության և սոցիալ-տնտեսական կարիքների ապահովման խնդիրները՝ սոցիալական և տնտեսական զարգացման և բնապահպանական կայունության համադրությամբ անտառագիտական տեսանկյունից տարածքների մասնագիտացված կառավարման միջոցով: Առաջարկվեց ստեղծել մոդելային անտառներ և սերմնային տնկարկներ, որոնք իրենցից ներկայացնում են գիտական հետազոտությունների կազմակերպման, ինչպես նաև անտառկառավարման համակարգի բարելավմանն ուղղված ունիվերսալ պոլիգոններ:

Էստոնիայում ազգային Ց&Չ մշակման փորձի ուսումնասիրություն (զեկուցում՝ Մատի Վալգեպեա)

Էստոնիայի ներկայացուցիչ պրն Մատի Վալգեպեան (Տվյալների կառավարման անտառային վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ) ներկայացրեց Էստոնիայում կայուն անտառկառավարման Ց&Չ գործընթացները և արդյունքները,

քաղված դասերը և առաջարկությունները: Նա նշեց, որ Էստոնիան մշակել է անտառների կառավարման համար մի շարք ուղենիշներ և ցուցանիշներ, որոնք կարող են օրինակ ծառայել Հայաստանի համար՝ ըստ կիրառելիության համաձայնեցնելով դրանք Հայաստանի պահանջներին: Էստոնիայում կայուն անտառկառավարման Ց&Չ գործընթացի հիմնական նպատակն է եղել միջազգային գործընթացներին որպես անկախ պետություն Էստոնիայի (վերա) ինտեգրումը: Միաժամանակ առկա բացթողումները լրացնելու նպատակով Էստոնիայում կարևոր որոշումներ են կայացվել: Էստոնիայում չկա պաշտոնապես հաստատված ազգային Ց&Չ փաթեթ և որպես հաշվետվողականության ու միջազգային հաղորդակցության հիմնական շրջանակ է ծառայել կայուն անտառկառավարման համաեվրոպական Ց&Չ: Էստոնիայում ամենաշատ քննարկվող 2 ցուցանիշները հետևյալներն են՝ խստորեն պահպանվող անտառների նվազագույն օգտագործում և կայուն անտառահատումների առավելագույն մակարդակ: Ջեկուցման շրջանակներում ներկայացվեցին մարտահրավերները, քաղված դասերն ու առաջարկությունները:

Վարժություններ – Հայաստանում կայուն անտառկառավարման Ց&Չ մշակման նպատակով համապատասխան փաստաթղթերի բացահայտում

Ջեկուցման ավարտից հետո կատարվել է Հայաստանում անտառների կայուն կառավարման կարիքների և առաջնահերթությունների գնահատման վարժություն (Աղյուսակ 1):


Խմբային վարժություն 1: Հայաստանի անտառային ոլորտում **սոցիալ-տնտեսական ասպեկտների** վերաբերյալ առկա համապատասխան փաստաթղթերի բացահայտում (հիմնական փաստաթղթեր, առավել համապատասխան փաստաթղթեր, փաստաթղթերում առկա հիմնական բացթողումներ և այդ բացթողումները լրացնելու առաջարկություններ): Խմբի (անդամներ՝ Ինգա Ջարաֆյան, Նաիրա Մանդայան, Ոսկեհատ Գրիգորյան, Արուսյակ Սիրադեղյան, Ադավնի Հարությունյան) առաջարկությունները հիմնականում վերաբերում էին անտառային ոլորտի հիմնախնդիրներին, այլ ոչ թե փաստաթղթերի կամ տվյալների հասանելիության պակասին: Առաջարկությունները հիմնականում ուղղված էին վառելանյութի սպառման նվազեցմանը ու էներգիայի այլընտրանքային աղբյուրների ավելացմանը, անտառային հրդեհների վաղ ահազանգման համակարգի բարելավմանը, էկոտուրիզմի զարգացմանը (թռչունների, վայրի կենդանիների դիտում և այլն), իրազեկության բարձրացմանը, ԲԲՆԱ-ին և այլն:

Խմբային վարժություն 2: Հայաստանի անտառային ոլորտում **էկոլոգիական ասպեկտների**՝ անտառածածկ մակերես, առողջություն, կենսաբազմազանություն, կայունություն և այլն վերաբերյալ առկա համապատասխան փաստաթղթերի բացահայտում (հիմնական փաստաթղթեր, առավել համապատասխան փաստաթղթեր, փաստաթղթերում առկա հիմնական բացթողումներ և այդ բացթողումները լրացնելու առաջարկություններ):

Խմբի (անդամներ՝ Սիրանուշ Գալստյան, Կարեն Աղաբաբյան, Հովիկ Մայադյան, Վլադիկ Մարտիրոսյան, Արթուր Գևորգյան, Նազելի Վարդանյան) կողմից թվարկվեցին անտառի

հետ առնչվող հիմնական ռազմավարական և իրավական փաստաթղթերը (Անտառի ազգային քաղաքականությունը ու ծրագիրը, անտառային օրենսգիրքը, ԿԱՌԳԾ և ԿՊ-ները), ինչպես նաև կարևորվեց այն փաստը, որ բացակայում է էկոհամակարգային մոտեցումը, կլիմայի փոփոխությունը և ածխածնի շրջափուլը, էկոհամակարգային ծառայությունները, անտառների դեգրադացիան ու անապատացման տեմպերը հաշվի չեն առնվում: Առաջարկությունները հիմնականում ուղղված էին անտառային տեղեկատվական համակարգի (NFMIS), անտառային կադաստրի, ԱԿՊ-ների և Անտառի ազգային քաղաքականության և ծրագրի, ՊՏ-ների կառավարման պլանների և կենսաբազմազանության գույքագրման բացթողումների բարելավմանը, որոնք առավելագույնս համապատասխանում են ազգային Ց&Չ-ների զարգացմանը:

Վարժություն 1: Մոցիալ-տնտեսական **Վարժություն 2:** Էկոլոգիական
ասպեկտներ



Խմբային վարժություն 3: Հայաստանի անտառային ոլորտում կառավարման ասպեկտների վերաբերյալ առկա համապատասխան փաստաթղթերի բացահայտում (հիմնական փաստաթղթեր, առավել համապատասխան փաստաթղթեր, թաստաթղթերում առկա հիմնական բացթողումներ և այդ բացթողումները լրացնելու առաջարկություններ): Խմբի (անդամներ՝ Արամ Գաբրիելյանը, Մերգե Հայրապետյանը, Արթուր Ալավերդյանը, Սամվել Գևորգյանը, Արմեն Ասրյանը) կողմից մատնանշվեցին օրենսդրական հակասությունների և ոլորտի թույլ համակարգման խնդիրները: Առաջարկությունները հիմնականում ուղղված էին անտառային մոնիտորինգի, տվյալների վերլուծության բարելավմանը և օրենսդրության վերանայմանը:

Աղյուսակ 1. Խմբային աշխատանքների արդյունքներ. Հայաստանում կայուն անտառակառավարման Ց&Չ մշակման համար համապատասխան փաստաթղթերի բացահայտում

Հարցեր	Խումբ 1 Անտառային սեկտորի սոցիալ-տնտեսական ասպեկտներ	Խումբ 2 Անտառային սեկտորի էկոլոգիական ասպեկտներ	Խումբ 3 Անտառային սեկտորի Կառավարման ասպեկտներ
<p>1. Ինչ հիմնական փաստաթղթեր/տեղեկատվություն է հասանելի այս թեմայի վերաբերյալ</p>	<ul style="list-style-type: none"> - ՀՀ անտառային քաղաքականություն և ռազմավարություն, - ՀՀ անտառի ազգային ծրագիր, - ՀՀ անտառային օրենսգիրք - Վարչական իրավախախտումների մասին օրենքը - Հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք - Վիճակագրական տվյալների առկայություն 	<ul style="list-style-type: none"> - ՀՀ անտառային քաղաքականություն և ռազմավարություն, - ՀՀ անտառի ազգային ծրագիր, - Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ազգային ծրագիր (2016-2020թթ.) - Անտառակառավարման պլաններ և ՊՏ- ների ԿՊ-ներ - Անտառային օրենսդրություն - Բարձր բնապահպանական նշանակության անտառների վերաբերյալ արձանագրային որոշում - ՊՏ-ների վերաբերյալ ռազմավարություն և գործողությունների ծրագիր - Կովկասի էկոտարածաշրջանային պահպանության ծրագիր - Կլիմայի փոփոխության ազգային հաղորդագրություն - ԿԲԿ ազգային հաշվետվություն 	<ul style="list-style-type: none"> - ՀՀՍահմանադրություն, - ՀՀ քաղաքացիական օրենսգիրք - ՀՀ անտառային օրենսգիրք - ՀՀ հողային օրենսգիրք - ՀՀ ջրային օրենսգիրք - ՀՀ մթնոլորտային օդի պահպանության օրենք

2. Ազգային Ց&Չ մշակման համար, որոնք են կարևորագույն ներդրումները	<ul style="list-style-type: none"> - Ապօրինի ծառահատումների դեմ պայքարի ծրագիր - Անտառամերձ համայքների բնակիչներին տարեկան Ցխմ բնափայտի անվճար տրամադրման ՀՀ կառավարության որոշում - Բնափայտի մթերման ընթացակարգի մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրաման - ՀՀ կառավարության 1045-Ն որոշում 	<ul style="list-style-type: none"> - ՀՀ անտառային քաղաքականություն և ռազմավարություն, - ՀՀ անտառի ազգային ծրագիր, - Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ազգային ծրագիր - ԱԿՊ - Անտառային օրենսդրություն 	<ul style="list-style-type: none"> - ՀՀ անտառային օրենսգիրք - Ֆլորայի մասին օրենքը - Ֆաունայի մասին օրենք - Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք - Հողային օրենսգիրք
3. Որոնք են փաստաթղթերի հիմնական թերությունները	<ul style="list-style-type: none"> - Որոշ անտառտնտեսությունների անտառկառավարման պլանների բացակայություն - Տվյալների անհասանելիություն - Թերի վերահսկողության համակարգ 	<ul style="list-style-type: none"> - ԱԿՊ-ում տեղեկատվական բացեր - Էկոհամակարգի մոտեցման բացակայություն - Անտառային էկոհամակարգերի մոնիթորինգի սկզբունքների բացակայություն - Կլիմայի (ածխածնի) հետ կապված խնդիրներ - Անտառահատման ցուցանիշներ - Անտառի դեգրադացիայի միտումներ - Կենսաբազմազանության ազգային մոնիտորինգի համակարգի բացակայություն - Անավարտ և թերի օգտագործվող անտառային տեղեկատվական համակարգ 	<ul style="list-style-type: none"> - Օրենսդրական հակասություններ - Ոլորտի թույլ համակարգում

<p>4. Ինչ առաջարկություններ են անհրաժեշտ համապատասխան տեղեկատվական բացերի լրացման համար</p>	<ul style="list-style-type: none"> - Վառելափայտի սպառման նվազեցում և այլընտրանքային էներգիայի աղբյուրների ավելացում - Թվային քարտեզների ստեղծում՝ օգտագործելով նորարարական տեխնոլոգիաներ - Անտառային հրդեհների վաղ ահազանգման համակարգի բարելավում - ՈԲԱԱ- ի օգտագործումը - Էկոտուրիզմի զարգացում (թռչունների, վայրի կենդանիների դիտում և այլն) - Իրազեկման բարձրացում 	<ul style="list-style-type: none"> - Բարելավել անտառային տեղեկատվական համակարգի բացերը - Անտառային կադաստր - ԿՊ-ների, ազգային անտառային քաղաքականության և ծրագրի մշակում, - Կենսաբազմազանության գույքագրում 	<ul style="list-style-type: none"> - Անտառային մոնիտորինգի կատարելագործում - Օրենսդրության վերանայում - Տվյալների վերլուծություն
--	--	---	---

3.2. Մեմինարի 2-րդ օր, 14-ը սեպտեմբերի – Ց&Չ գործնական հմտությունների զարգացում

1-ին օրվա նյութերի ամփոփում (Հովիկ Սայադյան)

Ամփոփիչ զեկույցի շրջանակներում կատարվեց 1-ին օրվա ընթացքում Էստոնիայի, Վրաստանի ու Հայաստանի (Նան ՀԿ կողմից ներկայացված զեկուցման) ներկայացուցիչների կողմից ներկայացված զեկուցումների գնահատում: Գնահատման չափորոշիչներն էին՝ Ց&Չ ազգային համատեքստի համապատասխանությունը գործընթացի քայլերին և մեթոդներին, կարևորագույն արդյունքներին ու սահմանափակումներին/բացթողումներին: Բոլոր չորս զեկուցումները բարձր գնահատական ստացան գնահատման թիմի անդամների կողմից: Իրենց մեկնաբանություններում ժյուրիի անդամները (Վլադիկ Մարտիրոսյան, Նաիրա Մանդալյան, Արթուր Ալավերդյան) կարևորեցին անտառային ոլորտի պատասխանատու մարմինների կարգավիճակի վերանայման, անտառային գույքագրման և գիտական հետազոտությունների, էկոլոգիական ասպեկտների, տնկարանների ընդլայնման, վնասատուների և հրդեհների կառավարման, բնական և կոճղաշիվային վերականգնմանն աջակցելու և արագաճ անտառային տնկարկների հիմնման կարևորությունը և այլն: Հաշվի է առնվել նաև անտառի մոնիտորինգի գլոբալ ցանցի (Global Forest Watch) Վրաստանի փորձը:

Խմբային վարժությունների ամփոփագիրը ներկայացված է նաև Աղյուսակ 1-ում:

Ց&Չ զարգացման գործընթացների սկզբունքներն ու պրակտիկան

(զեկույց՝ Վարդան Մելիքյան)

Հիմնական ներկայացված թեմաներն էին՝ մասնակցային մոտեցումը (սուբյեկտիվ և հուզական) ընդդեմ տեխնիկական մոտեցման (հստակ, գիտելիքի վրա հիմնված), բազմաշահառու գործընթացները (սեփականության զգացողության և վստահության ստեղծում, թափանցիկության և հաշվետվողականության, վերջնական արտադրանքի ընդունման ապահովում և այլն), խորհրդակցությունների չեզոք վարումը (որը չի դեկավարում քննարկումները) և այլն:

Ազգային առաջնահերթությունների բացահայտման նպատակով շահագրգիռ կողմերի ներգրավման «Ներքևից վերև» մեթոդի դերը

Անտառային ոլորտի առաջնայնությունների սահմանման նպատակով սեմինարի այս հատվածը նպատակաուղղված էր անտառային ոլորտի տարբեր շահագրգիռ կողմերի վերաբերյալ կատարված վերլուծությունների բացահայտմանն ու դրանց համախմբմանը: Մեմինարի վարողը ներկայացրեց բազմաշահառու խմբերի կողմից տարբեր վարժությունների (խմբային աշխատանքների) միջոցով մշակված մի շարք առաջնահերթ ցուցանիշների կարևորությունը: Տարբեր թեմաներով աշխատելու նպատակով մասնակիցները բաժանվեցին չորս խմբերի, որոնք ուղղված էին տարբեր շահագրգիռ խմբերի տեսանկյունից առաջնային ցուցանիշների բացահայտմանը: Ցուցանիշների ընտրության «Ներքևից վերև» մեթոդը նպատակ ունի ներգրավել բոլոր շահագրգիռ

կողմերին, իսկ ցուցանիշները բխում են ազգային գերակայություններից, լավ ձևակերպված, հստակ և չափելի են (ցուցանիշները՝ ներքևից վերև):

Խմբային վարժություն 1: Շահառուների բացահայտում և քարտեզագրում (Ռուբեն Պետրոսյան, Անդրանիկ Ղուլիջանյան, Արմեն Գեորգյան, Միրանուշ Գալստյան)


Խմբի նպատակը Հայաստանի համար կայուն անտառկառավարման ազգային Ց&Չ մշակման գործընթացի համապատասխան շահագրգիռ կողմերի բացահայտումը, անտառային ռեսուրսներից նրանց կախվածության ցուցադրումը և անտառկառավարման ու որոշումների կայացման վրա նրանց ազդեցության չափի ուրվագծումն է:

Վեր հանված կարևոր խնդիրներն ընդգրկում են հետևյալը.

1. Շահագրգիռ կողմերի սահմանում և դասակարգում, որի համար մշակված չափորոշիչները կարող են օգտակար լինել
2. Շահագրգիռ կողմերի հիմնական խմբերի բևեռացում, ինչը նշանակում է, որ անտառային ռեսուրսներից կախված մարդիկ չեն կարող մասնակցել որոշումների կայացման գործընթացին, իսկ նրանք ովքեր կարող են՝ անմիջապես կախված չեն անտառային ռեսուրսներից
3. Խմբերը բացահայտեցին շահագրգիռ կողմերի ներգրավման մեթոդները:

Խումբը ներկայացրեց բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերին (պետական և մասնավոր հատված, տեղական և տարածքային իշխանություններ, հասարակական և գիտական կազմակերպություններ)՝ ըստ անտառային ռեսուրսներից կախվածության և որոշումների կայացման վրա ազդեցության մակարդակի: 1-ին խմբի վերլուծությունը ցույց տվեց, որ անտառից անմիջական կախվածությամբ շահագրգիռ կողմերը չունեն որոշումների ընդունման լծակներ, իսկ որոշումների կայացման բարձր մակարդակ ունեցողները անտառներից քիչ կախվածություն ունեն: Առաջարկությունները ուղղված էին անտառային ռեսուրսներից կախվածության նվազեցմանը և որոշումների կայացման գործընթացում տեղական ու տարածաշրջանային իշխանությունների, ՀԿ-ների և գիտական կազմակերպությունների դերի մեծացմանը: Շահագրգիռ կողմերի ներգրավման համար առաջարկվել են տարբեր մեթոդներ, ինչպիսիք են՝ հասարակական լսումները, հանդիպումները, սեմինարները, տեղեկացվածության բարձրացումը և մեղիա տուրերը, բրոշյուրների և տեսանյութերի տարածումը և այլն:

Խումբը նշեց կրթության, տվյալների փոխանակման մեխանիզմների բարելավման և անտառային քարտեզագրման ստանդարտների, ԱԿՊ- ների թարմացման կարևորությունը:



Խմբային վարժություն 2. Անտառից կախված համայնքներ (Վլադիկ Մարտիրոսյան, Էվելին Կամբեր, Արուսյակ Միրադեղյան, Մերի Սահակյան)

Երկրորդ խմբի առաջադրանքը համայնքների խնդիրների, դրանց հետևանքների և լուծումների բացահայտումը և համապատասխան ցուցանիշների հայտնաբերումն էր:

2-րդ խումբը նշեց համայնքների կարողությունների պակասը (աղքատության, գիտելիքի բացակայության, անտառների կարգավիճակ) և բնակչության համար կազմակերպված վերապատրաստման դասընթացների, ոչ բնափայտային արտադրատեսակների օգտագործման, անտառների կառավարման ոլորտում ներգրավված համայնքների քանակի, աղքատության կրճատման, անտառտնտեսության միջին մասնագիտական կրթության խթանումը, անտառների կառավարման պլանների կարևորությունը և այլն: Որպես ցուցանիշներ խումբն առաջարկեց համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը, աղքատության կրճատումը, ՌԲԱԱ-ի կայուն օգտագործումը և անտառկառավարման, անտառների կառավարման պլանների մշակման ու վերապատրաստման ոլորտներում ներգրավված համայնքների քանակի ավելացումը:

Ընդգծվեց համայնքների դերի կարևորությունը և կարողությունների պակասը (տնտեսական և աղքատության): Հնարավոր լուծումը հանդիսանում է վառելիքի այլընտրանքային աղբյուրների, էկոտուրիզմի զարգացման և մեկնարկային նախաձեռնությունների խթանումը:

Քննարկված թեմաներն ու մեկնաբանությունները հետևյալն էին.

- ա. Միգրացիա (կարող է լինել ցուցանիշ)
- բ. Անտառկառավարման պլաններ (լավ է)
- գ. Աղքատության կրճատում (պարզ չէ)
- դ. Ներգրավված համայնքների քանակ (պարզ չէ)
- ե. Բնակչության ուսուցում (պարզ չէ)
- զ. ՌԲԱԱ- ի օգտագործման ծավալների ավելացում (ինչը չի նշանակում փայտանյութի օգտագործման ծավալների նվազեցում):

Խմբային վարժություն 3. Մասնավոր անտառային կազմակերպությունների հեռանկարներ (Կարեն Աղաբաբյան, Նաիրա Մանդալյան, Գագիկ Ամիրյան, Սամվել Գևորգյան, Արթուր Գևորգյան).

Երրորդ խումբը պետք է իրականացնեք SWOT վերլուծություն՝ անտառային մասնավոր հատվածի տեսանկյունից և մշակեր սահմանված առաջնայնություններն արտացոլող ցուցանիշներ:

3-րդ խմբի SWOT վերլուծության արդյունքում նշվեցին մասնավոր հատվածի կողմից ներդրումների պակասը (մասնավոր, սուբսիդիաներ, դրամաշնորհներ), բարձր ռիսկերը և բանկային վարկերի տոկոսադրույքները: Հիմնական ուժեղ կողմերն են՝ ռեկրեացիայի պոտենցիալը, որակավորված անձնակազմը, բիզնես պլանների և ՌԲԱԱ-ների առկայությունը: Հնարավորությունները ներառում են մասնավոր ներդրումների խթանումը, նորարարական տեխնոլոգիաների և տեղական մարդկային ռեսուրսների կիրառումը և փոքր ու միջին բիզնեսի զարգացման աջակցությունը:

Սպառնալիքները ներառում են՝ անկատար հարկային օրենսդրությունը և բնօգտագործման վճարների համակարգը, մարքեթինգի բացակայությունը, ստվերային տնտեսությունը, թույլ իրավակիրարկումը և ոչ կանոնավոր անտառկառավարումը:

Խումբը մշակեց ցուցանիշների հետևյալ թեմաները.

1. Արտադրանքի որակ և քանակ
2. Մեկ միավորի հաշվով անտառային ռեսուրսներ
3. Աշխատակիցների թիվ
4. Բարձր որակավորում ունեցող աշխատողների թիվ
5. Ռեկրեացայի հետ կապված գործունեություն, տեսակներ, քանակ և ծավալ
6. Ներդրումներ (մասնավոր, սուբսիդիաներ, դրամաշնորհներ)
7. Կենսաբազմազանության ցուցանիշային խմբեր:

Առաջարկությունները ներառում էին ներդրումային միջավայրի բարելավումը, կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումները, ինչպես նաև բիզնես ռիսկերի կանխարգելումը, կենսաբազմազանության գույքագրումն ու մոնիտորինգը:

